ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2024 թվականի N 1139-Ա

ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/12 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ << ԳՈՌ-ՄԱՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017 թվականի N 526 -Ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետը, նկատի ունենալով, որ «Գոռ-Ման» ՍՊԸ-ն մասնակցել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի մշակույթի տների համար գույքի ձեռքբերման նպատակով <<ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/12>> ծածկագրով գնման ընթացակարգին, սակայն «Գոռ-Ման» ՍՊԸ-ի տնօրեն Իշխան Ավագյանը, որը միաժամանակ նաև հանդիսանում է «ՄԱՇԽ» ՍՊԸ-ի տնօրեն, իսկ«ՄԱՇԽ» ՍՊԸ-ն 25.11.2023 թվականից մինչև օրս ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են կամ վարում են ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն կամ գործել են համաձայնեցված ՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից)՝ որոշում եմ.

1. ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/12 ծածկագրով գնման գործընթացի մասնակից «Գոռ-Ման» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

Մասնակցի				
Անվանում	ՀՎՀՀ	Գործունեության հասցե	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին	Գնամն ընթացակարգի ծածկագիրը

			չբավարարելու իրավական հիմքերը	
«Գոռ-Ման» ՍՊԸ-ն	08430516	ք. Գավառ, Միքայելյան 69	<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին կետի, 6-րդ ենթակետ **Գնումներին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:**	ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/12

2. Սույն որոշման մեկական օրինակ ուղարկել «Գոռ-Ման» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Թաթուլ Դավթյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ՝ Վ. ԴԱՎԹՅԱՆ

2024թ. հուլիսի 16
ք. Մարտունի